# ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

## «ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԵՐԵԽԱՅԻ և ԸՆՏԱՆԻՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ՀԵՏ ՎԵՐՑՆԵԼՈՒ և ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ և ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 22-Ի N 1398-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

| հ/հ | Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը | Առարկության, առաջարկության բովանդակությունը | Եզրակացություն | Կատարված փոփոխությունը |
|---|---|---|---|---|
| | 1 | 2 | 3 | 4 |
| 1 | Մուշեղ Հովսեփյան 02.12.2020 18:30:33 | Նախագծի վերջում բացակայում է ստորագրող պաշտոնատար անձի պաշտոնը, անվան սկզբնատառը և ազգանունը: | Առաջարկն ընդունվել է, կատարվել է համապատասխան լրամշակում: | |
| 2 | Մուշեղ Հովսեփյան 02.12.2020 18:30:33 | Նախագծի կետի 4-րդ կետի 1-ին ենթակետի համարակալման վրիպակը ուղղել: | Առաջարկը չի ընդունվել է, քանի որ համարակալումն արված է նպատակային: | |
| 3 | Մուշեղ Հովսեփյան 02.12.2020 18:30:33 | Նախագծի 2-րդ կետի 3-րդ ենթակետի «հարակից մարզերը» բառերը փոխարինել «Վայոց Ձորի մարզը» բառերով: Առաջարկում եմ դիտարկել Արցախի Հանրապետությունը որպես կազմակերպության սպասարկման | Առաջարկը չի ընդունվել : | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | տարածք (առնվազն մեթոդական աջակցության և վերապատրաստումների մասով) ավելացնելու իրավական հնարավորությունը: | | |
| 4 | Մուշեղ Հովսեփյան 02.12.2020 18:30:33 | Նախագծի 2-րդ կետի 2-րդ ենթակետի «ռիսկի գոտում հայտնված» բառերը փոխարինել «կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնված» բառերով կամ հստակեցնել, թե ինչ ռիսկի մասին է խոսքը: | Առաջարկությունն ընդունվել է և կատարվել է համապատասխան փոփոխություն: | |
| 5 | Մուշեղ Հովսեփյան 02.12.2020 18:30:33 | Նախագծի 2-րդ կետի 1-ին ենթակետի 2-րդ պարբերությունից հանել «կանխարգելիչ» բառը: | Առաջարկությունն ընդունվել է և կատարվել է համապատասխան փոփոխություն: | |
| 6 | Մուշեղ Հովսեփյան 02.12.2020 18:30:33 | Նախագծի 2-րդ կետի 1-ին ենթակետի 1-ին պարբերության «իրավիճակը» բառը փոխարինել «իրավիճակում հայտնվելը» բառերով: | Առաջարկությունն ընդունվել է և կատարվել է համապատասխան փոփոխություն: | |